ՀՀ բնակչության եկամուտները և ծախսերը

Ղազարյան Ռ. Ա., Լևոնյան Ս. Ռ.
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան (Հայաստան, Երևան)
Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի մագիստրանտներ
rom.ghazaryan96@gmail.com
levonyansur@gmail.com

Վճռորոշ բառեր՝ տնային տնտեսություն, դրամական և ոչ դրամական եկամուտներ, սպառողական ծախսեր, քաղաքային և գյուղական բնակավայրեր, դեցիլային խմբեր

Доходы и расходы населения Республики Армения

Казарян Р. А., Левонян С. Р.
Армянский государственный экономический университет (Армения, Ереван)
rom.ghazaryan96@gmail.com
levonyansur@gmail.com

Резюме: Эта статья посвящена двум наиболее важным показателям, которые характеризуют финансовое и денежное положение домохозяйств в Армении и их уровень жизни, а именно доходам домохозяйств и потребительским расходам. В работе анализируется состав и структура доходов и расходов домохозяйств и их динамика за последнее десятилетие. Эти показатели были также проанализированы десятью децильными группами, что показывает степень концентрации доходов населения. Официальная статистика, предоставленная Статичееский комитетом Республики Армении, является основой для анализа. Подводя итоги работы, можно сказать, что темпы роста доходов населения в Армении превышают темпы роста расходов. В 2018 резкое увеличение доходов было зафиксировано в самой бедной первым децильнем группе, и это увеличение было в основном основано на доходах от занятости. Доля услуг в расходов домохозяйств во всех децильных групп увеличивается в стране с каждым годом.
Ключевые слова: домашнее хозяйство, денежные и неденежные доходы, потребительские расходы, городские и сельские районы, децильные группы

Incomes and expenses of the population of the Republic of Armenia

Ghazaryan R. A., Levonyan S. R.
Armenian state university of economics (Armenia, Yerevan)
rom.ghazaryan96@gmail.com
levonyansur@gmail.com

Abstract: This article is devoted to the two of the most important indicators, that characterize the financial and monetary status of households in Armenia and their standard of living, which are households income and consumer expenditures. The work analyzes the composition and structure of households revenues and expenditures and their dynamics over the last decade. These indicators were also analyzed by ten decile groups, which shows the degree of income concentration in the population. The official statistics, provided by the Statistical Committee of Republic of Armenia, are the basis for the analysis. Summarizing the work, we can say that the rate of increase in the income of the population in Armenia is more than the rate of increase of expenses. In 2018 a sharp increase in earnings was recorded in the poorest first decile group, and this increase was mainly based on employment income. In all decile groups, the share of services in the households expenditures is increasing year by year in the country.
Keywords: household, monetary and non-monetary income, consumption expenditure, urban and rural areas, decile groups

Տնային տնտեսությունների նյութական և դրամական վիճակը բնութագրող և նրանց կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշներից են տնային տնտեսության եկամուտը և ամբողջական սպառողական ծախսերը: Այս հոդվածում կներկայացնենք Հայաստանում բնակչության եկամուտների և ծախսերի դինամիկան 2008-2018թթ. Ընթացքում, ինչպես նաև կխոսենք նրանց բաշխման անհավասարության մասին: Ներկայացվող վերլուծությունը հիմնված է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքների վրա: Տեղեկատվության աղբյուրն է՝ ընթացիկ ծախ-

սերի, սպառման և եկամուտների օրագիրը: Տնային տնտեսությունների կենսապայմանների ցուցանիշները գնահատված են ըստ մեկ շնչի հաշվով կատարված հաշվարկների: Վերլուծության համար հիմք են հանդիսացել ՀՀ ՎԿ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014-2019» հրապարակումները:

ՀՀ-ում ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտը 2008-2018թթ. ընթացքում անընդհատ աճել է՝ 2018թ. կազմելով 64 180 դրամ: Բազիսային 2008թ.-ի նկատմամբ աճը կազմել է 117%, իսկ նախորդ տարվա նկատմամբ՝ 4.2%: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում ամենամեծ տարեկան աճը տեղի է ունեցել 2014թ.-ին՝ կազմելով մոտ 15.6%: ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական ծախսը 2008-2018թթ. ընթացքում ունեցել է աճի միտում. կրճատում գրանցվել է միայն 2009թ.-ին (4.2%), սակայն վերջին տարիներին աճի տեմպը զգալիորեն նվազում է: Այս ցուցանիշը 2018թ. կազմել է 45 788 դրամ, որը 2008թ.-ի այդ նույն ցուցանիշին գերազանցել է մոտ 58.6%-ով, իսկ նախորդ տարվա ցուցանիշին՝ 3.1%-ով: Ամենամեծ տարեկան աճը գրանցվել է 2011թ.-ին և կազմել է մոտ 13.8%: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ 2008-2018թթ. ընթացքում բնակչության եկամուտ-ծախս հարաբերակցությունը լավացել է. եթե 2008թ. անհատը ամսական կտրվածքով սպառել էր իր եկամտի շուրջ 97.64%-ը, ապա 2018թ. այդ ցուցանիշը կազմել է մոտ 71.3%: Գծապատկերի միջոցով ցույց տանք Հայաստանի ՏՏ-ների մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտների և ծախսերի դինամիկան 2008-2018թթ. ընթացքում.

ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ արդյունքների համաձայն 2008-2018թթ. ընթացքում ամբողջական եկամուտների կազմում դրամական եկամուտների մասնաբաժինն աճել է, իսկ ոչ դրամական եկամուտների մասնաբաժինը նվազել: Եթե 2008թ. դրամական եկամուտները կազմում էին ամբողջի 90.8%-ը, ապա 2018թ. այդ ցուցանիշը կազմել է շուրջ 95.1%: Դրամական եկամուտները 2008-2018թթ. ընթացքում աճել են շուրջ 127.2%-ով, իսկ ոչ դրամական եկամուտները՝ ընդամենը 15.6%-ով:

Դրամական եկամուտների կազմում ամենանշանակալի մասը կազմում են վարձու աշխատանքից ստացված գումարները, որի մասնաբաժինը, սակայն, վերջին տարիներին սկսել է նվազել: Այս ցուցանիշը 2018թ. կազմել է 50.3% (կրճատումը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 1.9 տոկոսային կետ, իսկ 2016թ. նկատմամբ՝ 2.3 տոկոսային կետ): Դրամական եկամուտների կազմում 2-րդ ամենամեծ մասնաբաժինն ունեն պետական թոշակներն ու նպաստները, որոնց տեսակարար կշիռը, սակայն, 2008-2009թթ. համեմատ բավականին կրճատվել է՝ 2018թ. կազմելով 15.5%:

Դիտարկելով տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրերի՝ ակնհայտ է դառնում, որ վարձու աշխատանքից ստացված եկամուտների կարևորությունը մեծ է հատկապես քաղաքաբնակների համար, որտեղ այն 2018թ. կազմել է ամբողջական եկամուտների 59.1%-ը: Գյուղաբնակ տնային տնտեսություններում վարձու աշխատանքից ստացված եկամուտների մասնաբաժինը 1.85 անգամ ցածր է եղել քաղաքայինից և կազմել է ամբողջական եկամուտների 32.1%-ը: Վերջին տարիներին գյուղաբնակների եկամուտների մասնաբաժինը գյուղմթերքի և կենդանիների վաճառքից շատ արագ տեմպերով աճում է. 2018թ. այն կազմել է 19.8% (նախորդ տարվա նկատմամբ աճը՝ 4 տոկոսային կետ): Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար ոչ դրամական եկամուտների մասնաբաժինն անհամեմատ բարձր է քաղաքաբնակների համեմատ, հատկապես սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքի տեսքով: Ոչ դրամական եկամուտների մասնաբաժինը 2018թ. կազմել է գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտների 11.4%-ը, այն դեպքում, երբ քաղաքաբնակների համար այն կազմել է միայն 1.7%:

Քանի որ տնային տնտեսությունների սպառողական ծախսերի մասով ՀՀ ՎԿ-ն 2012թ.-ից սկսած անցել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակները» (NACE) դասակարգչից «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» դասակարգչին (COICOP), տվյալները կվերլուծենք ըստ այդ դասակարգչի:

ՏՏ սպառողական ծախսերն ըստ COICOP դասակարգչի ներառում են.

Գծապատկեր 1. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտների և ծախսերի դինամիկան, ՀՀ, դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Աղյուսակ 1. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական ամբողջական եկամտի կառուցվածքը ՀՀ-ում

	դրամ				%			
	2008	*2009*	*2017*	*2018*	*2008*	*2009*	*2017*	*2018*
Դրամական	26 866	28 038	58 474	61 047	90.8	91.8	94.9	95.1
Ոչ դրամական	2 710	2 503	3 121	3 133	9.2	8.2	5.1	4.9

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

1. Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ,
2. Ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ,
3. Հագուստ և կոշիկ,
4. Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ,
5. Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում,
6. Առողջապահություն,
7. Տրանսպորտ,
8. Կապ,
9. Հանգիստ և մշակույթ,
10. Կրթություն,
11. Հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ,
12. Տարբեր ապրանքներ և ծառայություններ:

Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքում (մեկ շնչի հաշվով միջին ամսական) անհամեմատ մեծ տեսակարար կշիռ ունեն պարենային ապրանքների և ոչ ալկոհոլային խմիչքների վրա կատարված ծախսերը, սակայն այս ծախսերի կշիռը վերջին տարիներին ունի նվազման միտում: 2018թ. այս ցուցանիշը հանրապետությունում կազմել է 39.5%՝ նախորդ տարվա 40.4%-ի դիմաց: Ընդ որում կրճատումը տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի հաշվին: Սպառողական ծախսերի նշված հոդվածն ավելի մեծ տեսակարար կշիռ ունի գյուղական բնակավայրերում: Երկրորդ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող հոդվածը բնակ-կոմունալ ծառայությունների և ջեռուցման համար կատարվող ծախսերն են, որոնք 2018թ. կազմել են 15.8%՝ նախորդ տարվա 15.5%-ի դիմաց: Քաղաքային բնակավայրերում այս ցուցանիշը ավելի մեծ է, քան գյուղական բնակավայրերում (2018թ.-ին 17.7%՝ 12.2%-ի դիմաց): Ծախսերի մեծությամբ երրորդ տեղում առողջապահության համար կատարված ծախսերն են: Գյուղերում այս ցուցանիշը ցածր է քաղաքային բնակավայրերի հա-

մեմատ, սակայն հարկ է նշել, որ վերջին տարիներին գյուղերում այս ցուցանիշը շատ

Գծապատկեր 2. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների տեսակները, 2018թ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Աղյուսակ 2. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրի տեսակի, 2008թ. և 2018թ., դրամ (կշիռն ընդհանուրի մեջ, տոկոս)

	Քաղաքային բնակավայր		Գյուղական բնակավայր	
	2008	*2018*	*2008*	*2018*
Ոչ դրամական եկամուտներ	**1 010 (3.2)**	**1 208 (1.7)**	**5 852 (22.0)**	**6 309 (11.4)**
Դրամական եկամուտներ	**30 174 (96.8)**	**68 405 (98.3)**	**20 754 (78.0)**	**48 907 (87.8)**
վարձու աշխատանք	18 068 (57.9)	41 165 (59.1)	7 881 (29.6)	17 711 (32.1)
ինքնազբաղվածություն	3 084 (9.9)	8 810 (12.7)	1 092 (4.1)	3 620 (6.6)
գյուղմթերքի, կենդան. վաճառք	201 (0.6)	628 (0.9)	4 670 (17.6)	10 911 (19.8)
սեփականությունից եկամուտ	49 (0.2)	165 (0.2)	10 (0.0)	19 (0.0)
թոշակներ և նպաստներ	5 006 (16.1)	10 366 (14.9)	4 615 (17.3)	9 250 (16.7)
տրանսֆերտներ	3 094 (9.9)	5 942 (8.5)	1 950 (7.3)	5 343 (9.7)
այլ եկամուտներ	672 (2.2)	1 329 (1.9)	536 (2.1)	2 053 (3.7)

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

արագ տեմպերով աճ է գրանցում: Եթե 2014թ. այս ցուցանիշը կազմում էր ընդամենը 4.3%, ապա 2018թ. այն կազմել է 9.2%:

Այժմ ուսումնասիրենք բնակչության եկամուտները ըստ դեցիլային խմբերի: Ըստ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների, 2008-2018թթ. ընթացքում բոլոր դեցիլային խմբերում բնակչության եկամուտները անընդհատ աճել են՝ բացառությամբ մի քանի դեպքերի: Բազիսային 2008թ.-ի նկատմամբ 2018թ. ամենամեծ աճը գրանցվել է 10-րդ և առաջին դեցիլային խմբերում (համապատասխանաբար 142.8% և 130.4%): 2018թ. նախորդ տարվա նկատմամբ եկամուտները աճել են բոլոր դեցիլային խմբերում՝ բացառությամբ 9-րդի, որտեղ 2016թ. եկամուտների աճը կազմել էր շուրջ 30%, իսկ հաջորդող երկու տարիներին այն նվազում է: Աղյուսակ 3-ում ներկայացնենք 2008-2018թթ. ընթացքում ՏՏ-ների մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները ըստ դեցիլային խմբերի (բացառությամբ եկամուտը ցույց չտված ՏՏ-ների).

Ավելի պարզ վերլուծության համար դեցիլային 1-10 խմբերը կմիավորենք ընդհանուր 4

խմբերում: Առաջին խմբում կլինեն առավել աղքատ 1-3-րդ դեցիլային խմբերը, երկրորդում՝ միջինից ցածր և միջին եկամուտ ունեցող 4-7-րդ դեցիլային խմբերը, երրորդում՝

Գծապատկեր 3. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը 2017 և 2018թթ.-ին՝ ըստ բնակավայրի տեսակի, ՀՀ, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Աղյուսակ 3. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները ըստ դեցիլային խմբերի, ՀՀ, դրամ

	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
2008	5 236	10 012	13 483	16 754	20 150	23 936	28 035	33 561	42 934	76 398
2009	5 273	9 877	13 731	17 660	21 416	25 337	30 058	36 482	45 723	76 508
2010	6 489	11 207	15 440	19 407	23 166	27 216	32 225	39 133	49 671	91 965
2011	6 530	12 242	16 757	21 181	25 880	30 582	36 501	43 972	55 171	95 095
2012	7 437	13 676	18 539	23 340	28 220	33 446	39 728	48 241	60 756	118 748
2013	8 469	15 400	20 981	25 847	30 969	36 169	42 430	51 041	64 742	130 642
2014	9 382	17 253	23 343	29 414	34 774	41 080	48 243	58 685	76 763	156 509
2015	10 299	19 082	25 414	31 424	37 664	43 682	50 708	60 711	76 501	168 604
2016	9 349	18 510	25 390	32 634	40 053	47 281	56 671	73 808	99 360	163 336
2017	10 209	20 967	28 609	35 392	41 798	49 118	58 854	72 974	95 679	172 413
2018	12 062	21 554	29 080	36 244	44 038	52 029	62 563	74 390	93 666	185 525

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

միջինից բարձր եկամուտ ունեցող 8-րդ և 9-րդ դեցիլային խմբերը, իսկ վերջին՝ չորրորդ խմբում կընդգրկվեն առավել հարուստ 10-րդ դեցիլային խմբի եկամուտները: Այս կերպ միավորված դեցիլային խմբերի միջին ամսական դրամական եկամուտների դինամիկան 2008-2018թթ. ընթացքում պատկերված է գծապատկեր 4.-ում: Գծապատկերից պարզ է դառնում, որ 2008-2018թթ. ընթացքում 1-7-րդ դեցիլային խմբերում էական փոփոխություններ չեն նկատվել, իսկ 8-9-րդ խմբերում վերջին տարիների ընթացքում եկամուտների որոշակի աճ տեղի ունեցել է: Իսկ ահա ամենահարուստ 10-րդ դեցիլային խմբում եկամուտների փոփոխությունը շատ կտրուկ է. Հատկապես ակնհայտ է 2012-2015թթ. և 2017-2018թթ.

տեղի ունեցած աճը: Ստացվում է, որ 2008-2018թթ. ընթացքում ցածր և միջին եկամուտներ ունեցողները շարունակել են ստանալ գրեթե նույն չափի եկամուտներ, իսկ բարձր եկամուտ ունեցողների եկամուտը էլ ավելի է աճել:

Ըստ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ 2018թ. տվյալների՝ երկրորդ և բարձր դեցիլային խմբերում դրամա-

Գծապատկեր 4. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական դրամական եկամուտների դինամիկան ըստ դեցիլային խմբերի, ՀՀ, դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

կան եկամտի հիմնական աղբյուր ծառայում են աշխատանքից ստացված եկամուտները, իսկ առաջին դեցիլային խմբում հիմնական աղբյուր են պետական տրանսֆերտները (թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ): Սակայն պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ ամենաաղքատ դեցիլային խմբում, ինչպես արդեն նշել էինք, վերջին տարիներին եկամուտների կտրուկ աճ է արձանագրվել, և հատկանշական է, որ այդ աճը բաշխվել է հիմնականում աշխատանքից և գյուղմթերքի վաճառքից ստացված եկամուտների վրա: Աշխատանքից ստացված եկամուտների կշիռն ամենամեծը 10-րդ դեցիլում է (74.3%):

Տնային տնտեսությունների ծախսերի ցուցանիշներն առավել վստահելի են եկամուտների համեմատ, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից (եկամուտները չբացահայտելու հակվածության էֆեկտը): Բնակչության եկամուտների կամ ծախսերի տարբերակման համար հաշվարկվում է «բևեռային» քվինտիլների հարաբերության գործակիցը: Այն է՝ 20% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին: Համաձայն այս գնահատականի՝ 2018թ.-ին 2008թ.-ի համեմատ աճել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության դրամական եկամուտների հարաբերակցությունը՝ 7.8 անգամից հասնելով 8.3 անգամի (ուսումնասիրվող ժամանակաշրջանում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016թ.-ին՝ կազմելով 9.4 միավոր), իսկ սպառողական ծախսերի մասով՝ 5.2-ից հասնելով 5.6 անգամի (գծ. 5): Սակայն «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը (այն է՝ 10% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 10% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին) ավելի ցայտուն է, քան քվինտիլային հարաբերության գործակիցը: Այս գնահատականի համաձայն նույնպես 2018թ.-ին 2008թ.-ի համեմատ աճել է 10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար հասնելով 14.1 անգամից 15.4 անգամի (կրկին ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016թ.-ին՝ 17.5 անգամ) և 8.0 անգամից 9.4 անգամի (գծ. 6):

2008-2018թթ. ընթացքում բոլոր դեցիլային խմբերում սննդի համար կատարվող ծախսերի կշիռը փոքրացել է, իսկ ծառայությունների համար կատարվող ծախսերինը՝ մեծացել: Այս մասով հատկանշական է 10-րդ դեցիլային խմբում կատարված շարժը: Ոչ պարենային

ապրանքների սպառման համար կատարվող ծախսերի մասնաբաժինը 2008-2018թթ. Ընթացքում աճել է բոլոր դեցիլային խմբերում՝ բացառությամբ տասներորդի:

Գծ. 7-ում ներկայացված է ամենաաղքատ և ամենահարուստ դեցիլային խմբերում գտնվող ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը և դրանց շարժը վերջին տարիների ընթացքում: Ինչպես երևում է գծապատկերից՝ առաջին դեցիլային խմբում կտրուկ փոփոխություններ տեղի չեն ունեցել, իսկ ահա 10-րդ դեցիլում շատ կտրուկ կերպով սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների համար կատարվող ծախսերը նվազում են, ինչին զուգահեռ բավականին արագ տեմպերով աճում են ծառայությունների համար կատարվող ծախսերը:

Գծապատկեր 5. Քվինտիլային հարաբերության գործակիցները, ՀՀ, 2008-2018թթ. (անգամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Գծապատկեր 6. Դեցիլային հարաբերության գործակիցները, ՀՀ, 2008-2018թթ. (անգամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Ամփոփենք կատարված աշխատանքը: Ըստ ՀՀ ՎԿ ներկայացրած պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտների աճի տեմպը առաջանցիկ է ծախսերի աճի տեմպից, ինչը նշանակում է, որ տարեց տարի բնակչության կատարած խնայողությունների կշիռը եկամտում ավելանում է: Վարձու աշխատանքից և պետական տրանսֆերտներից ստացվող եկամուտների կշիռը վերջին տարիներին նվազում է: Վարձու աշխատանքից ստացվող եկամուտները գյուղաբնակ ՏՏ-ներում 2018թ.-ին 1.85 անգամ ցածր են եղել քաղաքայինից, իսկ գյուղմթերքի և կենդանիների վաճառքից ստացվող եկամուտները 4 տոկոսային կետով աճել են՝ կազմելով ընդհանուր եկամտի շուրջ 19.8%-ը: Սպառողական ծախսերի մասով ակնառու է վերջին տարիներին գյուղաբնակների՝ առողջության համար կատարվող ծախսերի կտրուկ աճը:

2018թ.-ը նախորդող տարիներից առանձնանում է նրանով, որ եկամուտների կտրուկ աճ է գրանցվել ամենաաղքատ առաջին դեցիլային խմբում: Եվ չնայած այն բանի, որ այս դեցիլային խմբում եկամտի հիմնական աղբյուր դեռևս շարունակում են հանդիսանալ պետական տրանսֆերտները՝ ուրախալի է այն հանգամանքը, որ տեղի ունեցած եկամուտների աճը բաշխվել է հիմնականում աշխատանքից ստացվող եկամուտների վրա: ՏՏԿԱՀ տվյալները փաստում են այն մասին, որ տարեց տարի սննդի համար կատարվող ծախսերը նվազում են, իսկ ծառայությունների ստացման համար կատարվող ծախսերը՝ աճում: Եվ ծախսերի այսօրինակ շարժը տեղի է ունենում բոլոր դեցիլային խմբերում: Այս մասով շատ ակնառու է 10-րդ դեցիլային խմբում վերջին տարիներին տեղի ունեցած շարժը: Եթե 2016թ. ծառայությունների վրա կատարված ծախսերը այդ դեցիլային խմբում կազմում էին ընդհանուրի 44.6%-ը, ապա 2018թ. այդ ցուցանիշը կազմել է 56.9%:

Աղյուսակ 4. Մեկ շնչի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերի կառուցվածքն ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի, 2008 և 2018թթ., տոկոս

	սննդամթերք		ալկոհոլային խմիչք		ծխախոտ		ոչ պարենային ապրանքներ		ծառայություններ	
	2008	2018	2008	2018	2008	2018	2008	2018	2008	2018
I	67.4	57.5	0.4	0.4	4.5	3.0	7.3	14.3	20.4	24.8
II	66.3	57.0	0.4	0.4	4.0	3.4	8.2	14.9	21.1	24.3
III	62.8	55.0	0.4	0.3	4.4	4.0	9.4	16.2	23.0	24.4
IV	60.4	52.0	0.6	0.4	4.1	3.3	11.1	17.1	23.8	27.1
V	57.5	51.7	0.6	0.4	4.7	4.2	12.2	17.8	25.0	26.0
VI	57.1	50.3	0.5	0.4	3.9	4.2	13.5	19.3	25.0	25.8
VII	55.3	47.0	0.6	0.6	3.5	4.6	16.0	20.9	24.6	26.9
VIII	52.5	44.5	0.9	0.6	3.9	4.7	16.6	22.2	26.1	28.0
IX	47.3	42.9	0.8	0.8	3.2	4.2	19.1	21.2	29.6	30.9
X	40.1	21.3	1.2	1.1	2.6	2.6	22.6	18.2	33.5	56.9

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Գծապատկեր 7. ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը I և X դեցիլային խմբերում, 2016-2018թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ՎԿ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014-2019», Երևան, 2014-2019թթ.,
2. ՀՀ ՎԿ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019», Երևան, 2019թ.,
3. ՀՀ ՎԿ ՏՏԿԱՀ անվանազերծված միկրոտվյալների բազաներ (ըստ տնային տնտեսությունների),
4. Մ. Թումասյան, Կ. Հարությունյան, Ա. Հովհաննիսյան, Ե. Մանուկյան և այլք, «Հայաստանի տնտեսական զեկույց 2015: Հայ-վրացական տնտեսական համագործակցությունը», Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան, նոյեմբեր 2015թ., 89 էջ,
5. https://www.armstat.am/am/
6. https://www.edrc.am/hy/

Сдана/Հանձնվել է՝ 15.12.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 21.12.2019
Принята/Ընդունվել է՝ 25.12.2019